ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Էդիկ Մինասյան, *Հայ հերոսուհի կանայք, Ե., ԵՊՀ հրատ., 2016, 782 էջ+16 էջ ներդիր:*

Երևանի պետական համալսարանի և ՀՀ մշակույթի նախարարության համագործակցությամբ ընթերցողի սեղանին է դրվում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վաստակաշատ պատմաբան Էդիկ Մինասյանի հանրագիտարանային արժեք ունեցող «Հայ հերոսուհի կանայք» ստվարածավալ և մեծարժեք աշխատությունը: Ինքնատիպ կառուցվածք ու բովանդակային արժեք ունեցող մենագրության էջերում ընդգծվում է հայ կնոջ դիրքի ու կոչման մասին այն վեհ ու բարձր ըմբռնումը, որն ամրագրված է մեր պատմության բազմաթիվ էջերում, ինչպես նաև կերտվում է հայ կնոջ, հայ մոր կերպարը, որը հայրենիքի ու ազգի համար բախտորոշ օրերին անմասն չի մնացել գոյապայքարից՝ ձգտելով ամրագրել հայի՝ հայոց լեռնաշխարհում ազատ ու ինքնուրույն ապրելու իրավունքը: Վտանգի պահերին հայ կինը կատարել է իր վեհագույն առաքելությունը. մարտնչել է, հերոսացել, հերոսներ ծնել ու դաստիարակել:

Շուրջ մեկդարյա հոլովույթում՝ 1894-1994 թվականների պատմաշրջանում տեղի ունեցող աշխարհացունց իրողությունների, ազգային-ազատագրական պայքարի բովում հեղինակը փնտրում է հայրենասեր հայուհիներին, հայ կանանց, հայ մայրերին, որոնք իրենց սխրանքներով հետ չեն մնացել հայ տղամարդկանցից՝ սեփական ժողովրդի փրկությունը բարձր դասելով անձնական երջանկությունից, կյանքը նվիրաբերելով ազգի ազատագրությանը:

«Հայ հերոսուհի կանայք» գրքի երեք գլուխներում լուսաբանվում է հայոց հերոսական պատմության տարբեր փուլերում՝ ֆիդայական պայքարի, ինքնապաշտպանական հերոսամարտերի, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների, նաև Արցախյան շարժման ու ազատամարտի մասնակից և սխրագործություններով աչքի ընկած հայուհիների՝ աղջիկների, կանանց ու մայրերի գործունեությունը: Գրքի բոլոր ենթագլուխներն ունեն հայ կնոջը, հայ մորը ձոնված՝ նժդեհյան հայտնի և խորախորհուրդ խոսքերով բնաբաններ, որոնք գաղափարական առումով անմիջականորեն առնչվում են տվյալ ենթագլխի բովանդակությանը: Ուշագրավ է նաև գրքի մյուս առանձնահատկությունը. Յուրաքանչյուր հերոսամարտի, ազգային-ազատագրական շարժման որևէ փուլի անդրադառնալիս հեղինակը նախ համառոտ ներկայացնում է թշնամու դեմ հերոսական պայքարի ուղին, այնուհետև անդրադարձ կատարում հերոսուհիների գործունեությանը: Այդպես ընթերցողը կարծես հայտնվում է իրադարձությունների կիզա-

կետում՝ առավել ճշգրտորեն գիտակցելով և արժևորելով հայուհիների գործունեությունը պատմական նշված իրողության համատեքստում:

Աշխատության առաջին գլխում («Հայուհիների հերոսական գործունեությունը XX դարասկզբի հայոց ազատամարտի տարիներին») անդրադարձ է կատարվում հայոց ազատամարտի հայդուկային (ֆիդայական) պայքարի մասնակից հերոսուհի կանանց, այն հայուհիներին, որոնք գործուն մասնակցություն են ունեցել 1915-1923 թվականների ինքնապաշտպանական հերոսամարտերին: Ընթերցողին ներկայացվում են Սասունի, Զեյթունի, Վանի և այլ հերոսամարտերի ընթացքում ոչ միայն կռվի դաշտում մարտնչող հայ կանանց կերպարները, այլև հայ մայրերի հերոսապատումը, որոնք մայրական հոգատարություն ու օժանդակություն են ցուցաբերել ֆիդայիներին, հսկել են նրանց թաքստոցները, անհրաժեշտ տեղեկություններ հասցրել հերոսներին, զբաղվել են հետախուզությամբ, խնամել են ու բուժել վիրավորներին: Հայ հերոսուհի կանանց թվում են Սոսե Մայրիկը, Սառա Մայրիկը, Նունե Մայրիկը (նույն ինքը՝ Նունե Քոյյանը), Աննա Մայրիկը, Կոմիտե Մայրիկը, Դրախտի Մայրիկը՝ Նանիկ Ջինոյան, Ազգային Մայրիկը և ուրիշներ: Մայրիկ... ահա թե ինչ բնորոշում է տվել ժողովուրդն անձնական երջանկությունը հայրենիքի ազատագրության գործին նվիրաբերած մայրերին՝ փաստելով նժդեհյան հայտնի խոսքի բովանդակությունը. մայրը միշտ էլ իր հոգուց մի բան տեղափոխում է իր զավակների կրծքի տակ: Նման առյուծածին մայրերն են, իսկապես, որ ի չիք կդարձնեն «Հայաստանը պաշտպանող արհեստական ամրությունները»:

Աշխատությունը փաստում է՝ հայ հերոսուհի կանայք, հայ մայրերը կատարել են իրենց սրբազույն առաքելությունը, որը փոխանցվել է նաև սերնդեսերունդ՝ հասնելով մինչև մեր օրերը: Թեև, ըստ ֆիդայական գործող կանոնների, հայ կանանց արգելված էր մասնակցել հայդուկային կռիվներին՝ նրանց՝ օջախի և ընտանիքի պահապանների կյանքը վտանգի տակ չդնելու համար, բայց նշված օրենքին չենթարկվեցին հայ հերոսուհիները՝ հայոց հերոսամարտի տարեգրության մեջ իրենց անփոխարինելի դերն ունեցող Սոսե Մայրիկը, Ցրոնքցի Շուշանը, Մշո դաշտի սուրհանդակ Մարիամը, մշեցի հերոսուհի Իսմոն, նշանավոր հայդուկապետ Սևքարեցի Սաքոյի կինը՝ Մարո Ղարաքեշիշյանը, կին զինատար հայդուկ Ծաղիկը, հռչակավոր առաջին ֆիդայապետ Արաբոյի քույրը՝ Կարմիր իրիցու տան Գյուլեն, Սասունի ինքնապաշտպանության հերոսուհիներից Շաքեն (մենագրության հեղինակի պապի՝ Սիմոն Հակոբյանի հարազատ մորաքույրը), ազգային և պետական նշանավոր գործիչ Կարո Սասունու մայրը՝ Աննա Մայրիկը, որը, զգալով թուրք-քրդական հարձակումների վտանգը, որդիներին ուսանելու և հեղափոխական գործունեություն ծավալելու հատուկ կարգադրություն էր տվել, գելիեգուզանցի Հռիփսիմե տատիկը (Ըռփո Տայո), որը, չնայած կույր էր, բայց բոլոր ֆիդայիներին ճանաչում էր ձայնից՝ զանազանելով անգամ ֆիդայիների ու թշնամիների հրացանների ձայները, հեղափոխական պայքարի նվիրյալներ, ազատագրական գործիչներ Իսկուհի Պալճյան-Թիրյաքյանը, Զարուհի Տերոյանը (Ժենյան), Իսկուհի Տյուլպենտճյանը (Օրիորդ Հուստիկ), Սոֆի Արեշյան-Օհանջանյանը, Ժենյա Ադամյանը և ուրիշներ:

Ուշագրավ է, որ աշխատության էջերում հայ կինը մարմնավորվում է ոչ միայն որպես մարտիկ, հեղափոխական գործիչ, ազգի նվիրյալ, այլև ընտանիքի պահապան, որն իր ընտանիքը դարձնում է ազգային դիմադրության օջախ. մի դեպքում տեսնում ենք զենքը ձեռքին մարտի դաշտում սխրանքներ գործող հայ կնոջը, հայրենասեր հայուհուն, մյուս դեպքում՝ընտանիքի հիմնասյանը, պահապանին, որը վտանգի պահերին արցունքոտ աչքերով թոնիրն է համբուրում՝ աղոթելով Աստծուն, որ իր բացակայությունը երկար չտևի պապենական օջախից, կամ հայ կնոջ, որն իր զավակներին կարգադրում է կյանքը նվիրաբերել հայրենիքի ազատության սրբազույն գործին, հայ մորը, որն իր զավակին հանձնում է ֆիդայապետերին, զավակ չունենալու դեպքում ինքն է ձի հեծնում՝ զինվորագրվելով պայքարին:

Երկրորդ գլուխը կրում է «Հայուհիները Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի տարիներին» խորագիրը: Նշված գլխում հեղինակն ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է իրենց սխրագործություններով թիկունքում, կռվի դաշտում զենք վերցրած հայ կանանց, նաև այն հայուհիներին, որոնք իրենց սխրանքն ամրագրել են որպես տանկիստ, կապավոր, հրետանավոր, օդաչու, բժշկասանիտարական աշխատող: Հեղինակի հաշվարկով, շուրջ 10 000 հայուհի (էջ 340)՝ բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ, ուսանողուհիներ, մտավորականության ներկայացուցիչներ, կամավոր մեկնել են ռազմաճակատ և մարտնչել ֆաշիստական զավթիչների դեմ: Սոնիկ Սինոյանը, Հասմիկ Թամազյանը, Վալենտինա Լիվյանը, Քնարիկ Հարությունյանը, Անելա Աբրահամյանը, Նինա Մուրադյանը, Ալեքսանդրա Օսմանյանը, Սոնյա Չիլինգարյանը, Անժելիկ Միքայելյանը, Սոնյա Մելքումյանը, Սուսաննա Զաքարյանը, Սոֆյա և Ռուզաննա Լալայանները, Մարգարիտա Մելքումյանը, Հեղինե Բուռնազյանը և ուրիշներ իրենց սխրանքներով աչքի են ընկել ռազմաճակատներում մարտնչելիս, վիրավորներին բժշկական օգնություն ցույց տալիս, հետախուզական գործունեություն իրականացնելիս: Նրանցից շատերը՝ 19-20 տարին չբոլորած հայուհիներ, անավարտ թողնելով իրենց ուսումնառությունը բժշկական համալսարանում, տեղափոխվել են մարտի դաշտ, թշնամու ուժեղ կրակի տակ ռազմադաշտից կյանքի գնով դուրս են բերել մարտիկներին, անհրաժեշտության դեպքում դոնոր դարձել նրանց: Ոչ մի պարագայում հերոսականությունը տեղի չի տվել. մարտի դաշտից մինչև սանգումարտակ հայ կինը նույն քաջությունն է դրսևորել: Հաճախ անհրաժեշտ տեղեկություններ է տվել թշնամու զորքի և զինտեխնիկայի մասին, հանդուգն հարձակումներով շարքից հանել բազմաթիվ կամուրջներ, զինտեխնիկայով բեռնավորված գնացքներ, ավտոմեքենաներ, զրահամեքենաներ, տարաբնույթ կառույցներ՝ ոչնչացնելով թշնամու բազմաթիվ ուժեր: Հերոսականության նույն ուժով հայրենիքի համար դժվարին ժամանակահատվածում պետության տնտեսությունը հզորացնելու գործին են ձեռնամուխ եղել գործարանի կաղապարողներ Զարիկ Թովմասյանը, Հայկուշ Սիմոնյանը, Վարդուշ Ավետիսյանը, բանվորուհիներ Փիրուզ Ավետիսյանը, Վարդուշ Գրիգորյանը, Թամարա Մինասյանը,Մարիամ Թումանյանը, Ելենա Մկրտչյանը և ուրիշներ: Նրանք իրենց հերոսականությունն ամրագրել են քրտնաջան աշխատանքի միջոցով, երբ փոխարինել են տղա-

մարդկանց, կատարել ամենածանր աշխատանքները՝ բարձր պահելով հայի պատիվը: Հասարակական գործունեությամբ աչքի ընկած Արփիկ Բաղայանի նման հերոսուհիները աշխատել են հայրենի գյուղի կոլտնտեսությունում՝ յուրաքանչյուր հեկտարից ստանալով ռեկորդային բերք ու բարձրորակ հումք: Նրանց նման անձնուրաց հայուհիները արժանիորեն պարգևատրվել են բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով:

Աշխատության երրորդ՝ «Հայ կանանց մասնակցությունը Արցախյան գոյապայքարին» գլխում ներկայացվում են ազատամարտիկ, բժիշկ, հետախույզ հայուհիների սխրագործությունները: Նրանց հերոսականությամբ ոգևորվեց և դաստիարակվեց մի ամբողջ սերունդ, որը կարողացավ ազատագրել հայրենիքի մաս կազմող Լեռնային Ղարաբաղը, որը բոլշևիկյան Ռուսաստանի թեթև ձեռքով տրվել էր «Ադրբեջան» հորջորջվող թուրքերին:

«Հայ հերոսուհի կանայք» աշխատության մեծագույն արժեքը ոչ միայն հայ հերոսուհի կանանց կենսապատումի ու գործունեության ամրագրումն է մեր պատմության էջերում, հայ կնոջ սխրանքի արժևորումը ու այդ կարևոր գիտակցման փոխանցումը գալիք սերունդներին, այլև այն հանրահայտ իրողության փաստումը, որ հայ կինը հերոսուհի է ոչ միայն պատերազմի դաշտում՝ զենքը ձեռքին, այլև ընտանեկան հարկում՝ զավակներին դաստիարակելիս, նաև լավագույնս ընդգծվում են հայ կնոջը հերոսացնող հատկանիշները՝ մայրական հոգատարությունն ու հոգածությունը ոչ միայն իր զավակի, այլև ազգի յուրաքանչյուր ներկայացուցչի նկատմամբ, անսահման հայրենասիրությունը, քաջությունը, վճռականությունը, աշխատասիրությունը և այլն...:

«Հայ հերոսուհի կանայք» աշխատությունը ապացուցում է հանրահայտ մի ճշմարտություն. «Չպետք է տարակուսել այն սերնդի առաքինության վրա, որին դաստիարակում են առաքինի մայրեր: Առյուծներն աղվեսներին կաթ չեն ջամբում, և ոչ էլ դյուցազնուհիները գաճաճներ են սնուցանում: Ավելի մեծ է այն ազգը, որ արժանավոր մայրերով է հարուստ, քան այն ազգը, որ յուր թնդանոթներով է պարծենում...» (Մուրացան):

Սխալված չենք լինի, ոչ էլ չափազանցրած, եթե Էդիկ Մինասյանի «Հայ հերոսուհի կանայք» աշխատությունը համեմատենք պատմավիպային արժեք ունեցող գեղարվեստական ստեղծագործությունների հետ, որոնցից շատերը ծնունդ են առել հայոց պատմության դժվարին ժամանակահատվածներում՝ ժամանակի հրամայականով՝ ժողովրդին նախնիների հերոսականությամբ համակելու, քաջալերելու կարևորագույն նպատակով: Սակայն ի տարբերություն պատմագեղարվեստական նմանօրինակ աշխատությունների՝ այս գրքում զետեղված պատմությունների հիմքում փաստական ճշմարտությունն է, ոչ թե գեղարվեստական երևակայությունը: Գրքի էջերում հառնում են հայ հերոսուհիների բազմաթիվ կերպարներ, և մեր պարտքն է ուսումնասիրել նրանց կյանքը, լսել նրանց պատգամն ու հավատարիմ մնալ նրանց քարոզած ազգային ու նվիրական մեծ գաղափարին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մ. Վ.
Բանասիրական գիտությունների թեկնածու